

ՔՐՈՒԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ

(Շար. Աստուծոյ քննել)

1894ի Չին-Ճարտնական պատերազմը, զոր ճարտնական սկսաւ թերակիրգին քրաւելու զիստուրութեամբ և վերջացուց զայն շինական հարկատուութենէն ազատ ու անոր գերիշխանութենէն անկախ հռչակելով, անտարակոյս այն նպատակով եղաւ, որ այդպէսով ճարտնայ ազգաց թիրնը երկրի վրայ աւելի ազատ ըլլայ:

Միւս կողմէ սակայն, Փորթան Մայրաքոյն Արեւելքի մէջ առասկան արապականութեան համար անսահման նըշանակութիւն ունի: Եթէ Ռուսաստանը կուզէ այստեղ զիրիշխանութիւն ստանալ, պէտք է որ Փորթան անկախ պահէ: Նոյնը ըրաւ Չինաստանը իր տիրապետութեան սիւնը: Փորթան անցնելով ճարտնայ տիրապետութեան տակ Ռուսոյ համար վտանգաւոր հակառակորդ մը կաւելնայ ցամաքի վրայ: Մովսիսն տեսակէտով Փորթան նոյնպէս ո՛չ պակաս կարեւորութիւն մը ունի: Ռուսական հիւսիսային արեւելեան ծովագերից քաղաքներու յարաբերութիւնները ընդհանրապէս և վրաստիտուցութիւն մասնաւորապէս կը կատարուի Փորթանի ճանապարհով, Ռուսաստանի մէջ տուած են զգեղին վո. փորո անունը: Եթէ Ռուսաստանը արեւելեան Ասիայի ծովագերից վրայ իր տիրապետութիւնը հաստատել կուզէ, պէտք է ան անպատճառ այս ճամբով յառաջանայ, Ռուսիան չէր կարող թողնալ, որ ճարտնայ Փորթան ամբողջը և իր ազդեցութեան տակ առնէ: որովհետեւ ասով կը վերահաստատուի իր շահերը, Այսպէսով Ռուսաստանի և ճարտնայ մէջ յառաջ էր եկած շահերու բաղադրում մը, որը յետոյ առլուծելի վէճի մը կերպարանքը ստացաւ:

Փորթական ժողովուրդը իբրև ամ...

տեղ կան խորտումներ և աչմուկներ: Երեւոյթներին նայելով գրութիւնը պատերազմի պատճառով գնալով պէտք է լրջանայ: Ան այժմ ամէն ինչ եռում է ու զեռում, Ապագան յղի է անակնկալներով...:

Հրահ

ՆԱՄԱԿ ԱՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի խմբագրութիւն «Շար ժուռնալ» ազգագրութեան շահեցէք հրատարակել հետեւեալ նամակը:

Տեղեւոյ հրատարակ թագ. Ռուսերգոյ համար նոր ընտրութիւնն վերջին անգամ որոշեալ օրին չկարենալով տեղի ունենալ, ժողովոյս կողմանէ յետաձգուած էր ուրիշ օրուան համար: Հետեւապէս իւր վերջին որոշման համեմատ այդ տեղի պիտի ունենայ 29 փետրուարին տեղույս Ազգ. վարժարանին մէջ. նոյն օրը քուէներու ընդունելութիւնը սկսուելով անաւտան ժամը 8ին եւ պիտի վերջանայ ժամը 2ին կէս օրէն վերջը, և անմիջապէս քուէարկութիւնը պիտի կատարուի:

Չայս ի գիտութիւն հաղորդելով ժողովս պատիւ ունի հրոյ իրել ձեզ կատարելու համար սոյն ընտրութեան մէջ ձեր ազգային պարտականութիւնը, եւ միանգամայն խնդրել ի ձէնջ որ անձամբ յանձնել ժողովոյս ձեր քուէն ըստ ԴՅՐԳ սահմանադրութեան յօդուածին համաձայն, եւ ար պագրեալ քուէ չպիտի ընդունուի:

Ի դիմաց ընտրողական ժողովոյ Մարտիրոս Բնյ. Մարտիրոսեան 23 փետր. 1904 Վանա

ՄՅՈՒՆԱԿԱՆ

(Պատմութիւն 10) ԱՆՏԱՆ ԶԵՆՈՎ

— Էն, եթէ դու ինձ այլեւս չես սիրեր, մէկ ուրիշ սիրելուդ համար— թող Աստուած հետոյ ըլլայ, ըստ Ա. պօկիւնը լալկան ձայնով մը: «Բայց ինչ բանի համար է աս խարխալութիւնը, այս չուտող զեռնութիւններ, որոնք եւ ինչո՞ւ համար, ես քեզ ինչ ըրիս: Կսկեցէք, բժիշկ, բաւ տաքութեամբ Գիրիւղին մօտենալով, զորք ակամայ վկայ եղաք զժրագրութեանս, եւ ես ձեր անաջ չեմ ուզեր ճամբարութիւնը ծածկել, կերդնում ձեզ, որ այս կինը սիրած եմ, աստուածացուցած սրկի մը պէս: Անոր ամէն ինչ զոհած եմ, ազգականներէս բաժնուած, իր սիրուն համար պաշտօնս թողած, երաժշտութիւնը մէկ կողմ ձգած, իրեն ամէն բան ներեր եմ, նոյնիսկ այն, ինչ որ չպիտի ներէի ոչ ժօրս եւ ոչ քրոջս, իրեն երեք ծուռ աչքով նայած

բողոքութիւն հազիւ թէ գործնական դեր մը կատարէ: Թէպէտեւ նորագոյն մարդահամարով քսան միլիոն բնակիչ ունի, բայց զինուորական տեսակէտով շատ թույլ է: Փորթանը իրենց ամբողջ պատմութեան ընթացքին մէջ իրենց ուժեղ զրացիներուն լուրջ դիմադրութիւն մը գիտողի երբէք չեն ցոյց տուած և այսօր այդ բանի համար կատարելապէս անձեռնհաս են: Ճամբային բանակներու կազմակերպութիւնը՝ — ուստի մարդիչներու միջոցաւ — դեռ իր սկզբնական շրջանին մէջ կը գտնուէր, ոչինչ է նոյնպէս ծովային պատերազմական ուժը, և նահապետական կառավարութիւնը կը գտնուէր բոլորովին անընդունակ միապետի մը ձեռքին տակ, այնպէս որ կորովի յառաջխաղացութեան մը համար որ և է յոյս չկայ: Բայց եւ այնպէս Փորթանը իրենց ալ որոշ չափով մը ինչպիսի վարպետներ նպաստեց: Նպաստեցին իրենց օտարներուն դէմ ունեցած բոցավառ ատելութեամբ, որ զիրենք կրգեւորէ և մասնաւոր խոսովութիւններու ատիկ կուտայ: Ատելութիւնը ամենէն առաջ ուղղուած է ճարտնայներու դէմ, որոնց անընդհատ ասպատակութիւնները դատարաններու ընթացքին մէջ, ատեակ մը ժառանգական թշնամութիւն են ըստեղծած ճարտնայներուն դէմ: Բայց նոյնպէս Ռուսերու, ինչպէս և բոլոր օտարներու դէմ կը արեւ անհաշիւ թշնամութիւն: Ինչ կառավարութիւնը անկարող է այս օտարատեցութեան հզոր պողոկոսները արգելել: Բայց ճիշտ այդ կարգը բաներն են, որ ժամանակը եկածին պէս դրացիներու կընծայեն ցանկալի առիթ միջամտելու համար: 1894ի պատերազմին մէջ Փորթական գաղտնի ընկերութեան մը օտարականներու արագաման համար հանած ասպատակութիւնը ճարտնայներուն ծառայեց իբրև պատրուակ: Նոր ատենները Փորթանի մէջ երեւան եկած էին այդ օրինակ շարժումներ, որոնք բոլորեցին Ռուսաստանի և ճարտնայի միջև վառուած կրակը:

վառուցներ իրենք հիմա մարել կուզեն, բայց չեն կրնար: Ինչ որ կը վերաբերի ճարտնային, ան մեծ արագութեամբ իւրացնելով եւրոպական քաղաքակրթութիւնը ըրաւ յառաջգիտութիւններ, որոնք պարտաւոր պատճառեցին նոյնիսկ արեւմտաքի մէջ մեծ կարծեցիկ թէ ճարտնայ կապուած է Սերոպայի հետ ներքին կապերով: Սակայն իրականութեան մէջ ճիշտ հակասակը պատասխանած է: Վախճան սարուան մէջ ճիշտարուած մեծ յեղաշրջումներուն դիտողի մը համար յայտնի է, որ այս բոլորը իր ներքին պատճառով օտարատեցութեան օճաջ եկած է: Եւ այս խորտուկ ատելութիւնը մնացոր է մինչև այսօր, թէպէտեւ նոր կառավարութիւնը շուտով հասկցաւ, թէ այս ճանապարհներով օտարականներուն հետ առայժմ լուր պէտք է վարուել: Ճարտնայները գիտակից և բաց կերպով իւրացուցին եւրոպացիներու տեխնիկական ստեղծագործութիւնները, որպէս զի կարելի եղածին չափ շուտով այդ գէնքերը իրենց, եւրոպացիներու դէմ դարձնեն: Անոնք մեզ դեռ — ինչպէս առաջ ալ — բարբառութեամբ տեղ կը գնեն: Բարբառութեամբ, որոնք միայն պատահաբար հասած են ներկայ կատարելութիւններուն, կատարելութիւններ ապակայն, որոնք ձեռք բերել շատ դժուրին է ու շատ հեշտ: Այսօր իրենց Չինաստանի դէմ ունեցած յաղթանակներէն այնպէս են զի նովցեր, որ ճարտնայները արգելաձուտ են ամէն ինչ իրենց սեփական մտաւոր աշխատանքի արդիւնքը, նըկատելու ինչ որ իբրև արդիւնք եւրոպական քաղաքակրթական ախտաւանջի ընդօրինակներ են: Միջատի կառավարութիւնը անշուշտ Չինացիներու և Եւրոպացիներու դէմ մղուած պատերազմի մը տարբերութիւնը լուր գիտէ, բայց ազգային փառասիրութիւններու առջև իր զիրքը կը դժուարանայ: Ասոր մէջն է ներկայ դրութեան կորիզը, այստեղ

վճարական, կոշտ եւ անհաճոյ դարձան: Եւ երբ Ապօկիւնը միանձնուէր մը յիշեցնող գեղեցիկ, բայց չոր եւ անարտայայտիչ դէմքով ժանկամայր կնոջ մը լուսանկարը բժշկի աչքերուն առջ ընկելով հարցուց ի՞նչ արդեօք կարելի է հաստալ որ այս դէմքը կրնայ ստել, բժիշկը հրացայտ աչքերով յանկարծ տեղէն վեր ցատկելով պոռագ՝ ամէն մէկ վանկ կոպիտ արտաբերելով: — Ինչո՞ւ համար այս բոլորը դուք ինձ կը օտէք, Չեմ ուզիր այդ բաները լսել: Չեմ ուզեր, ազգականից բռնուցեք սեղանին գարնելով, Ձեր գաղտնիքները ինձ ինչ կը վերաբերին, սատանան թող ստնի: Դուք ոչ մէկ իրաւունք չունեք այս անձոններու թիրնները ինձ պատմելու: Կամ թերեւս կը կարծէք, թէ ես բաւականաչափ վիրաւորուած չեմ: Ես սպասաւոր մըն եմ, որուն չափէն զուրս վիրաւորուել իրաւունք ունենամ: Ապօկիւնը քանի մը քայլ յետ գնաց եւ ստուած Գիրիւղին կը նայէր: Ինչո՞ւ զիս հոս բերեք, կըսէր բրժիշկը, որու միջոցին մօրուքը կը դողար: Եթէ դուք կըրթով կամուսնանաք, կըրթէն կը խնթնեք եւ զըրուցեղութիւններ կուտաք, ասիկա ինձ ինչ կը վերաբերի: Ինչ առն-

չու թիւն կայ իմ եւ ձեր վէպերուն միջև: — Ձեզ հանգիստ թողէք: Յոյն սուէք ինչնասիրութիւն եւ հանդէս եկէք ձեր համամարդկային զաղափարներով, նուազեցէք (բժիշկը ուսում մը ըրաւ զէպի Չեմ թակի ամանը) Չեմ թակ կամ փող, եթէ կուզէք աքաղաղի մը չափ ճարպ կապեցէք, բայց մի յանդգնեք մարդ մը ծաղրել: Ձեք հասցնար զայն յարգել, գոնէ խնայեցէք զանիս: Անբեցէք, ինչ կը նշանակէ այս բոլորը, հարցուց Ապօկիւնը կարմրելով: — Այս կը նշանակէ թէ, ստոր եւ զաղտու բան է մարդկանց հետ խոսելը: Ես բժիշկ եմ, դուք կընդունէք բոլոր բժիշկները եւ գլխաւորաբար բոլոր աշխատաւորները, որոնք վրայն անուշահոտ իւղերու եւ պոսնը կը թեւան հոտ չի գար, իբրև ձեր սպասաւորներ, սակայն ոչ ոք վշտացած մարդէ մը ինդկատակ չի նկատ իրաւունքը ձեզ չէ սուտաւ: — Ինչպէ՞ս կրնաք աս ինձ ըսել, հարցուց Ապօկիւնը մեղմիւ եւ զէմքը նորէն դողալ սկսաւ այս անգամ անսկասկած դայրոյթէն: — Ո՛չ, ինչպէ՞ս կրնաք ձեզ թողնալ, զիս հոս բերել, գիտնալով որ ես ձանր վշտի մէջ եմ, որպէսզի ձեր այլանդակութիւնները մտիկ ընեն:

պէտք է փնտռել այն գործօնները, որոնք ամենէն առաջ պատերազմական գործի կը մղեն: Ծառոնացիներու ըր- նաւորութեան գլխաւոր գիծերէն մէկն է պատերազմական փառքի ծարաւը, նման այն հայեացքներուն, որոնք կը խնային հին ատենները Գերմանիոյ մէջ, Այն ժամանակ իշխողի գործն էր իր վաստակներուն առիթներ առ պատերազմի փառքը վաստակել և նը- ռաւաճած երկիրներով զիրենք վար- ձառնել, այսօր մասամբ նմանօրինակ հայեցակէտով կը մղուի ճարտակամ պատերազմը: Այս գաղափարին գը- խաւոր նեցուկն է Սամուրի դասա- կարգը: Ծառոնիայի աւատական օ- բնակչութիւնը միջին դարու եւրո- պական ստորին ազնուականութեան հետ ճշտութեամբ կրնայինք համեմա- սել: Բնակչութեան այս խաւը ազգի գործունէայ և մտաւորական գլխաւոր ներկայացուցիչն է: Գրեթէ բոլոր զինուորական պաշտօնեաները և դե- կավարող զինքները իրենց ձեռքն են: Այս տարրը, օրէնսդրական յեղափո- խութեանն ի վեր իր գոյութեան արե- ստական պայմանները ամբողջովին փոխելով ու բոլորովին ապահով գրու- թիւն ձեռք ձգելով այսօր անհայն- զիտ ոյժ մըն է պարծած: Նա այժմ երբ և ինչ ժողովուրդը կը մղէ հերո- սական գործերու և արկածներու:

Արդէն մօտ անցեալը ցոյց տուաւ, որ կառավարութիւնը տեւողական կա- ռողութիւնը չունի ներքին խողովու- թիւնները զսպելու, եթէ ոչ դուրսը պատերազմական ձեռնարկներ ընելով: Այս է եղեր ճշգրիտ պատճառը Զի- նաստանի դէմ ունեցած պատերազմին և վաղ թէ ոչ այս պիտի ըլլայ պատ- ճառ թշնամական առաջխաղացումներ ընելու դէպքի ցամաքը: Ինչ որ ճա- ռոնական կառավարութիւնը ամենէն շատ պատերազմէն կը կեցնէր, ան- տարակոյտ Ռուսաստանէն ունեցած վախը չէր, այլ դրամի պակասու- թիւնը, ճարտան հարուստ երկիր մը չէ: Վերջին տասը տարուան մէջ ըրած հակայական սպառազինումները

զայն ձգեցին անսովոր պարագրու- տակ, Սակայն ինչպէս կերելի, ազ- գային փառասիրութիւնը ներկայիս այս հոգն այ վերցուցեր է: Ծառոնիոյ ժողովուրդը առատ կերպով միշտ պիտի օգնէ կառավարութեան և եկած լու- րերը կը հաստատեն այս կարծիքը:

Ռուսաստանի դիրքը Արեւելքի մէջ շատ պարզ է: Իր դարերէ ի վեր Ասիոյ մէջ ըրած դանդաղ, բայց մշտական յատկապէս զարգացումը ո՛չ մի ժամանակ չը պէտք է ընդունի իր արդիւնք վայրկենական քաղաքական կացու- թեան մը, այլ հզոր, ամբողջական ընթացք մը ներքին անփոփոխելի քաղաքականութեան: Բիւրարի անպատճառ յարեցումներն և Ռուսաստանի արեւմտեան խօսքերը, թէ անոնք պէտք եկածը ընելու յետոյ այլևս միայն խաղաղ ապրելու կը ցանկանան, անկասկած ուղիղ չէ: Եւ տեսակ բան մը չկայ: Մեծ պե- տութեան մը մէջ ահագին ոյժ մը կը մարմնանայ, ճիշտ այնպէս ինչպէս միլիտարիստներու մօտ, որոնք իրենք իրենց մէջ ներքին անհրաժեշտու- թիւն մը կը գտնեն աշխատելու, այ- սինքն բազմազիջելու և յետոյ երբեք չեն կրնար զարար առնել: Ռուսաս- տանը իր Ասիայի մէջ տարածման ճամբուն վրայ չի կրնար կամաւորա- պէս կանգ առնել, երբ նոյնիսկ իր այս կամ այն ցանկութիւնը արդէն կատարուած է: Ան կը տիրէ արդէն ստորոջներէ ազատ նաւահանգիստի մը կամ երկաթուղային հսկայ գիծի մը, բայց ատոնք դեռ չեն բաւեր, Ռու- սիայ պիտի շնայ այնքան ատեն տա- րածուի, մինչև որ իր պատմական քայքայման օրը հասնի:

Եւ ահա այս պատճառով է, որ ան- խուսափելիօրէն ուշ կտմ կանուխ Գօ- ռէայի համար կռիւը պիտի բրդէր: Հետեւանք մասին կանխաբան բան մը ըսելը շատ դժուար է: Յամենայն դէպս, Արեւելեան Ասիայի մէջ ճառ- նական բանակները դաշտի մէջ, ի- ընեց սքանչելի կարգերով և հոյա- կապ սպառազինումով, անձամբ տես-

նելէ վերջ Եւրոպացիներու յաղթա- նակը այնքան ալ ապահով չեմ կար- ծեր, չնայելով որ Եւրոպայի մէջ տի- րող ըմբռնումներու համեմատ ասիայի ինքնուրուիքեան հասկնալի բան մը պէտք է ենթադրել: Ծառոնեան ունի նաեւ մեծ առաւելութիւն մը, իր ամ- րող ոյժը կը գտնուի կուր վայրին այնքան ժօտիկ, Ռուսաստանը այս առաւելութիւնը չունի: Ծառոնիա ե- թէ մտածելու բան մը ունի, այն ալ գրաւի պակասութիւնն է: Սակայն ճիշտ այստեղ կը կայանայ իր եւրոպա- կան դաշնակիցին՝ Անգլիոյ՝ ոյժը: Անգլիական դրամը եթէ չըջօրէն օգ- նութեան հասնի ճարտական պատե- րազմին, այն ատեն պէտք է ճառ- նիոյ յաղթանակը բաւականին հաւա- նական համարել:

Արդե՞ք Անգլիան պիտի ունենայ՝ քաղութիւնը բացարձակ կերպով ճա- ռոնիայի կողմն անցնելու: Դեռ յայտ- նի չէ, բայց ռուս-ճարտանական պա- տերազմը կը ներկայացնէ անզիջական քաղաքականութեան հետատես և վճ- րական վարչի մը համար օգտուելու ամենայնարմար առիթը: Արեւելեան Ա- սիայի այս բոլոր շարժումներուն մէջ պէտք է փնտռել շարժարի երկու ա- մենամեծ պատութիւններու՝ Ռուսիայի և Անգլիոյ, վճարական ճակատամարտը Ասիոյ տիրապետութեան համար: Ռու- սիայի իւրաքանչիւր յաղթանակ հար- ուած մըն է Անգլիոյ համար և փոխա- դարձաբար Անգլիոյ յաղթանակը Ռու- սիոյ համար: Անգլիա աններելի յի- մարութիւն մը ըրած պիտի ըլլայ եթէ թոյլ տայ որ ճարտանայ յաղթուի: Այս պարագային հարաւի կողմէն Ռու- սիոյ յաղթական ընթացքը դէպի Մոնթօրիա և Զինաստան այլևս ան- կարելի կը ըլլայ կեցնել և թուրք կանգ- նել անոր դիմաց:

Ծառոնիա երկար չէր կ'ըրող համ- րելու ու նետուեցաւ պատերազմի դաշտը: Կռուողներու ո՞ր մէկին ուղ ղուած պէտք է ըլլայ մեր համակրան- քը, բնականաբար ճարտանայի համար առանձին սէր մը չենք կրնար տա-

ծել, բայց Քորէական հարցը աւելի ուժեղ կը բարձրանայ մեր առջեւ երբ հարցնենք, թէ ով պիտի ըլլայ Ասիա- յի վրայ գերիշխողը, Անգլիան թէ Ռուսիան: Կոս բնականաբար պիտի ըսենք, երկուքէն և ոչ մէկը. իսկ ե- թէ կամ մէկը և կամ միւսը պիտի ըլ- լայ, այն ատեն մեր ձայնը կուտանք Անգլիոյ, որովհե- տեւ անգլիական տիրապետու- թիւնը իր հետ տարեր է միշտ — գոն մինչև այսօր — ժողովուրդներուն հա- մար ազատութիւն ու խաղաղ զարգա- ցում, իսկ ռուսականը ատոր — ճիշտ հակառակը — տաժանելի լուծ մը և կոպիտ բռնութիւն մը:

Դկ. Գեորգ Վեդեր

ԱՍԿԵ ԱՆԿԵ

Պճարժու՞մի յարգոյ խմբագ- րութենէն կը խնդրեմ, որ այս համեստ տողերու անկիւն մը շը- նորհէ իր սուղ էջերուն մէջ, թէ- և — պէտք է խոստովանիմ — իմ գրելիքս յո՞ւրժու՞մի համար բու- ներ չեն, բայց միտքս շատ բա- րի է, ճիշդ այդ պատճառով ալ յո՞ւրժու՞մի ընթացողներէն նե- րողութիւն կը խնդրեմ, որ զի- րենք պահ մը ինձմով պիտի ըզ- բազեցնեմ: Միաքս բարի է, ո- րովհետեւ ժողովուրդին պէտք է աւետեմ, թէ անցեալ կիրակի մազ մնաց որ հայաստան ազատուէր... և գիտէ՞ք ինչով... թաղականներ ընտրելով, որը դժբաղտաբար ձախորթութեան էր հանդգեր: Զախորթութիւն ըսելով մեծ բան մը չի հասկնաք, այսինքն ընտ- րութիւնը յետաձգուեր էր հայոց ազգ. սահմանադրութեան տրամա-

պոռաց բծիչը և և բոունցը նորէն սեղանին դարձաւ, ձեզ ո՞վ իրաւունք տուաւ օտարի ցաւը ծաղրելու:

— Անկասկած, ձեր դատողութիւնը կորսնցուցեր էք, պոռաց Ապօկիլը: Այդ անպնդութիւնն է, ևս ինքս դժբաղ մը եմ... և...

— Ի՞նչու, կրկնեց բծիչը հեզ- նական ժպտով: Կրկնեց այդ բառը բերանիդ մի առնէք, այդ տեսակ բաներու հետ դուք գործ չունիք: Սրիկաներն ալ, որոնք իրենց պարս- քը վճարելու համար դրամ չեն գտ- ներ ինքզինքնին դժբաղ կանուա- նեն: Իրձատեալ աքաղաղ մը, որ իր ճարպէն կը խեղդուի, նոյնպէս դժբաղը արն է: Ողորմելի մարդիկ:

— Թարգելի պարսն, դուք ձեզ կը մոռնաք — սկիւտները սեղմելով շնչ- չեց Ապօկիլը: Այդ տեսակ բառերու տեղ... հարուած մը կրնայ փոխանակ- ուիլ, կը հասկնա՞ք ինձ:

Ապօկիլն շտապով ձեռքը քովի գըր- պանը տարաւ, հանելով անկէ պզտիկ տետր մը և գտնելով երկու թղթաղ- րամներ նետեց սեղանին վրայ:

— Վերցուցէ՛ք ասոնք ձեր այցելու- թեան համար, ըսաւ որու միջոցին քթի ծակելը կը շարժէին, այդ ձեր վարձքն է:

— Ինձ դրամ առաջարկելու կայիք չունէք, գոչեց բծիչը և ձեռքը կրկնեցնելով թղթաղրամներ վար նե-

տեց: Վերաբարնեցները դրամով չեն կրնար կարգադրուիլ: Ապօկիլն ու բծիչի իրար դէմ դէմ կանգնած կը շարունակէին զիրար անվայել կեր- պով նստատեղ: Անոնք կեանքի մէջ բնաւ, մինչև իսկ երազի մէջ այն- քան անարդար, կոպիտ և անհասկը- ցած խօսքեր չէին ըսեր: Երկուքի խօսքերէն բացարձակ կերպով դժ- բախտներու ետակարութիւնը կար- տայայտուէր: Դժբախտները եսական են. անոնք շարիբէն, անարդար- ներէն, կոպիտներէն եւ յիմարներէն աւելի դժուար զիրար կը հասկնան:

Դժբախտութիւնը մարդիկ չէ միաց ներ, այլ կը բաժնէ զանոնք և միւ- չեւ իս այնտեղ, ուր ցաւի նմանու- թիւնը պէտք էր որ մարդիկ զիրար կապէր, ցոյց կուտայ աւելի անար- դարութիւն և կոպտութիւն, քան թէ յարաբերական կերպով գո՞ մարդ կանց միջեւ:

— Հոգացէ՛ք վերադարձիս մասին, գոչեց բծիչը շնչասպառ:

Ապօկիլը բարձր գանգաւարեց, Եւ երբ այդ ձայնէն մարդ չերեւցաւ, կրկին գանգաւարեց և զայրոյթով գանգակը գետին զտրեց, ու գոր- քին վրայ ինչաւով մահամերձ ձայն մը հանեց: Սպասուորը երեւցաւ:

— Ո՞ւր էք պահուտեր ամէնքդ ալ, գրողը ձեզ տանի, պոռաց տանտէրը, բոունցը ցոյց տալով: Ո՞ւր էիք

այժմ, Դենա՞ ըսէ, որ այս պարտի կառքը պատրաստեն, ևս ի՞նչ համար ալ ուրիշ կառք մը լծեն: Կեցի՛ր, կանչեց, երբ սպասուորը երթալու կը պատրաստուէր: Վաղը այլևս ոչ մէկ դաւաճան տան մէջ չպիտի մնայ: Դո՛ւրս բողբոջ ալ: Ես ուրիշ սպա- ւորներ պիտի բռնեմ, ճիւղաղնի՛ր:

Կառքերու լծուելուն սպասելով Ապօկիլն ու բծիչը կը լռէին: Ա- ռաջիւնը յագեցեալ կերպարանք մը ունէր և իր պիւրճութիւնը նորէն ստացած էր: Հիւրասենեակի մէջ վեր վար քալելով վայելուչ կերպով գը- լուիքը կը շարժէր և կը թուէր թէ լան մը կը մտածէր: Զայրոյթը դեռ չէր անցած, բայց կը փորձէր իրեն անանկ զերք մը տալ, իբր թէ չի նկատեր թշնամին...

Բծիչը սակայն, սեղանի եզերքը մէկ ձեռքով ուժով բռնած կանգնած կը նայէր Ապօկիլին վրայ խոր, գը- րեթէ լկտի անարգանքով մը, այն- պէս, ինչպէս միայն ցաւն ու այնա- ջողութիւնը գիտին նայել, երբ իրենց դէմ յագեցումն ու պիւրճութիւնը կը տեսնան: Երբ քիչ մը վերջը բծիչը կառք նստելով հեռացաւ՝ աչքերը դեռ շարունակ հակակրանքով կը նայէին: Մտնէր, աւելի մութ քան ժամ մը առաջ: Կարծիք կ'իստաւորուէր բուրբ յետին արդէն անհետացեր էր և ամ. պիւրը, որ լուսինը հսկեր էին մութ

բիծերու պէս աստղերն էին շրջապա- տեր:

Ապօկիլին կառքը իր կարմիր լապ- տերով կտրեց անցաւ բծիչի կառքը: Ապօկիլնը գնաց բողբոջելու, յիմա- րութիւններ ընելու...

Սմբողջ ճանապարհորդութեան մի- ջոցին բծիչը կը մտածէր ոչ իր կը- նոյլ և ոչ ալ մեռած զաւկի վրայ, այլ Ապօկիլին և այս մարդկանց վը- րայ, որոնք քիչ մը առաջ թողած տան պէս աներու մէջ կապրին: Իր մտածումները անարգար ու տմարդի- օրէն կոպիտ էին: Ան կը մեղադրէր Ապօկիլնը, անոր կիրք, Փափշիսկիին, բոլորը, բոլորը, որոնք վարագոյն միշտադին մէջ կապրին և անուշա- հոտ իւղեր կը հոտին, ասոնց բոլո- րին իր ամբողջ ճանապարհորդու- թեան մէջ հոգուն խորէն կատեր: Եւ իր մէջ հաստատուն կարծիք մը կազմեց այդ տեսակ մարդկանց մա- սին:

Ժամանակը, ինչպէս և Գիրիլովի վիշտը, պիտի անհետանան, սակայն այն կարծիքը, որ անարդար և մարդ կային սրտին անվայել է, չը պիտի անհետանայ և բծիչի յիշողութեան մէջ մինչև գերեզման պիտի մնայ:

ՎԵՐՋ

գրութեանց դէմ ըլլալուն պարզ
և հասկնալի պատճառով,

Պատահած մեծ աղէտէն անհու-
նապէս յուզուած երբեմն Վանա-
մէջ հրատարակող «Հուզում»
թերթի խմբագիրը Գուրգէն Օղ-
լու Հասան Եֆէմի էֆէնտի «գէլը
ըզմը» եղած մարդու ըր պէս
ուժին բոլոր թափովը յարձակի
է ծնունդի աւագերեցին վրայ և
ոտքը գետին զարնելով արդա-
րութիւն ու իրաւունք է պահան-
ջեր, էֆէնտիին ձայնակցեր են և
ուրիշներ. Խեղճ քահանայ... սա-
կայն եթէ անկա ինծի օգնու-
թեան կանչած ըլլար, ես
զինքը շուտով կազատէի նեղ զը-
րութեանէն: Եւ անտէք թէ ինչ
դիւրին ու օրինաւոր կերպով:

Անալին՝ կը բանայի սահմանա-
գրութեան 73րդ. յօդուածը և կը
չուցնէի, թէ հոն սպազորուած
թուղթերով քուէ տալը արգիլ-
ուած է: Չնայելով ասոր սակայն
էֆէնտին ինքը իր սպարանին
մէջ սոմսեր տպելով ցրուած էր:

Իրաւ է, ինչ ընենք, եազմա-
ծի խմբագրի մը խելքը այդքան
կը հասնի, բայց կը ցուինք նաև
ըսելու. թէ «էֆէնտիի քէֆ»ին
համար հայերը իրենց սահմանա-
գրութիւնը չեն կրնար փոխեր:

Երկրորդ՝ նախագահի ստորա-
գրութեամբ երեւցած յայտարա-
րութեանց մէջ կարգիլուէր նա-
մակով քուէ զրկել, մինչդեռ
սահմանագրութեան 72րդ. յօդ-
ուածը կը թոյլարդէ այդ:

Երրորդ՝ ըստ 71րդ. յօդուածի
տրամադրութեան նոր ընտ-
րութիւնը կը ըլլայ պայմանա-
ժամը լրացնող և ցնոր ընտրու-
թիւն անժամանակեայ կերպով
պաշտօն վարող թաղականութեան
և ընտրողական ժողովի, որոշում-
ներով և ներկայութեամբ, ընտ-
րողական գործողութիւններու մէջ
անոնց ունեցած համաձայնու-
թեամբ: Հակառակ օգնքի այս
պահանջին, ոչ ժողովի ոչ ալ կի-
րակի ներկայ պատուելու հրա-
ւիրուած էր պաշտօնը լրացնող և
անժամանակեայ կերպով պաշտօն
վարող թաղականութիւնը:

Հասկնալի է անուշաքի խրտ
ուրիշ խմբագրին ազդեցութիւնը
ամէն բանի մէջ: Բայց ես բնա-
րողական ժողովի պատուարժան և
մեծապատիւ անդամներէն սահ-
մանագրութեան օրէնքներու մա-
սին այդքան անտեղեակութիւն
չէի սպասեր, ամօթ չէ երբ մարդ
իր չի գիտցած գործին մէջ չը
խառնուի, բայց երբ անիկայ ըս-
տանձնէ պատասխանատու պաշ-
տօն մը, այն ատեն պէտք է խըզ-
ճի մտք ուսումնասիրէ նաև իր
պարտուց և իրաւանց սահման
ները հիմնուած օրէնքի վրայ... և:

Վանա 23 Փետր. 1904

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կաթողիկոսի առողջական գրու-
թիւնը լաւ է:

— Կովկասցի տիկին Եկատա-
րինէ Նատրիբանց Վանի ազգա-
յին դպրոցներու նուիրած է 4420
ֆր.: որու մէկ մասը յատկացուած
է Վանի կեդր. վարժարանին: Ու-
սումնասէր տիկինը ուրիշ տարի-
ներ ալ ըրած է այս օրինակ նուի-
րատուութիւններ:

Չէ, պէտք չէ՝ վհատիլ: Կա-
յերը քաղաքակրթութեան մէջ
ընդունակ ազգ մը են և գիտնե-
նաւ զոհողութիւն յանձն առնել:
Միայն Վանույի հայ դպրութիւն
է, որ չի սերեր քաղաքակրթու-
թիւնը, չը սերեր ուսումը. չի հե-
տաքրքուիր դպրոցով և ձմրան
մէջ առանց փայտի կը ձգէ իր
վարժարանները, որով անան-
գութ կերպով պատճառ կը դառ-
նայ նաև երախներու հիւան-
դութեանց, անոնց մտաւոր ու
Ֆիզիքական փճացման: Տխուր,
չատ ախար իրականութիւն:

— Պատրիարք Օրմանեան 600
ֆր. զրկած է Եսկի-Նէ՛՛՛րի վար-
ժարանին, որը վնասուած էր հը
դեհի մը պատճառով:

— Լոյս տեսած է «Իրօշակ»
յունուարի թիւը, որու պարունա-
կութիւնն է 1903-1904, Ազատու-
թեան Ձանդ, Թղթակցութիւններ
Վանէն, Մուշէն, Պայազիտէն,
Լուրեր Երկուքի Աշխարհից,
Բասենի Կուռի Արձագանքները,
Կոչնակներ, Իրութիւնը Կովկա-
սում, Վրաստանը և ազգ. Ինքնա-
վարութեան հարցը Եովկասում,
Կենսագրական, Քաղաքական Տե-
սութիւն, Մամուլի տեսութիւն,
Տէւօրական գործողութիւններ:

— Դերասան Մնակեանի մեռ-
նիլը կը հերքեն Պօլսոյ թերթե-
րը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազատութեան տօնին առիւի
Յարին և Իլիանին միջև փոխա-
նակուած են սիրուիլը հնազգիբ-
ներ:

— Պեղկասաի ուսանողութիւնէն
220 հոգի ուսանող 20 հոգի ուսա-
նողներ հասած են Սօֆիա և ըն-
դունուած մեծ ոգևորութեամբ:
Անոնք այցելած են համալսարանը
և Սօֆիայի զանազան հետաքրքիր
տեղուանքը: Ի պատիւ Սերպ ու-
սանողներու տրուած են խնճոյք-
ներ, որոնց մասնակցած է նաև
Բէթթով:

Պուլկար և Սերպ ուսանողներու
մէջ եղած են ժողովներ, ուրանդ
խօսուած են երկու ազգի յարա-
բերութիւններու և պալքանեան
զաշնակցութեան մը մասին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
ՊՍ. Տ Ե Ր Ա. Ջ Մ

Պատերազմի շուրջը կը տիրէ
լուսթիւն: Ռուսերը փոխադրու-
թեան համար կը հանդպին մեծ
գծուարութիւններու: Հասած
գուեղերն ալ անկարող են շուտով
կուռի մէջ մանել, կը պակսի պա-
շար և զինուորներու մէջ ինկած
են հիւանդութիւններ: Ռուսերը
չեն կարող Եալուի վրայ իրենց
դիրքը պահպանել և սկսած են
եա քաշուել: Ճարտնացիները ա-
ռանց արգելքի կը շարունակ ն
զօրքի կեդրոնացումը և Սէուլէն
մինչև Վիչու կը հաստատեն նը-
կաթուղիի գիծ մը ռազմական նը-
պատակներով: Փոթորկի և ալի-
կոմիսիան պատճառով ուշացած
են քանի մը ճարտնական փոխադ-
րաններ: Տիրող սաստիկ ցուրտը
կը նեղէ նաև ճարտնական զօրքը:

— Փոխադրութիւնը Ռուսերուն
համար երթուղի աւելի կը դժ-
ուարանայ: Եղբկառքերը որոշ-
ուած ժամանակէն երկու շաբաթ
ուշ կը հասնին տեղերին: Չօրաց
մէջ կը տարածուին հիւանդու-
թիւններ: Զինացիները պաշար
չեն տար, ձիերու համար խոտը
պէտք է Ռուսիայէն բերել:

— Փետր. 22ին 5 ճարտնական
զրահաւորներ 55 վայրկեան ռմ-
բակոծած են Բօրթ-Արթուրը:
Ռուսական ազբիւրէ կը հաղորդի
թէ քաղաքին վնաս մը չէ հասած:

— Լոյսնի մէջ 150 ռուս սա-
նողներ և ուսանողներ ժողով
կազմելով ընդունած են բանաձե-
մը, որու մէջ ռուսական բոլոր
յեղ. տարրերը կը հրաւիրեն կա-
ռավարութեան դէմ ոտքի կանդ-
նել և ժողովրդական ներքին պա-
տերազմ՝ հրատարակել:

— Կոմս Խօլստոյ իր երկիրէն
1000 սնտուկ դիւրք նուիրած է
պատերազմի գացող զինուորնե-
րուն:

Արդեօ՞ք պիտի ընդունուին:
— Միջերկրական ծովուն մէջ
փոթորիկի հանդպելով վնասուած
են 3 ռուսական տօրպիտօնատեր,
որոնք յետոյ Սուէէ հասած են:
Հոս մեծօրած է անոնց ամուս-
նալ:

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Իւսքիւպի շրջակայքը գոնուող
պուլկար և սերպ ազգայնակու-
թիւնները մոռնալով հին ատելու-
թիւնը իրար մերձեցած են և կու
զեն միասին գործել կառավարու-
թեան դէմ: Գրիսօֆօր գիւղին
մօտ թիւրքերու և յեղափոխա-
կաններու միջև տեղի ունեցած
են կռիւններ:

— «Յայթ» կը հաղորդէ, որ
Սուլթանի առողջութիւնը քայ-
քայուած է:

— Այսպանացիներու և զօրքին
միջև տեղի ունեցած են նոր կը-
սիւններ:

Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն

«Թան» կը հաղորդէ, որ Ռա-
ղէշի կառավարութիւնը հրաման
ստացած է կարգը և խաղաղու-
թիւնը պահպանելու համար պատ-
րաստութիւններ տեսնել:

Իտալիէն լուր ստացուած է,
թէ հրամանը արդէն գործադ-
րուած է:

— Կ. Պօլսէն «Ինթօլ մացիօն»
կը գրեն, թէ թիւրք կառավա-
րութիւնը կը պատրաստուի Սա-
սունի դէմ գաւեր լարել, որ
կեդրոնացած են հայ ֆէտայի-
ները ժողովուրդը պաշտպանելու
համար:

ՌՈՒՍԻՍ

Արտաքին գործոց նախարար
Լանստօրֆի հրաժարման վրայ լու-
րեր կը պտտին:

— Բիշնէվի մէջ սկսած է հա-
կա՛րէական նոր շարժում մը, ե-
ղած են ցնյցեր, որոնց միջոցին
կողպատուած է հրէայի մը խա-
նութը:

ՖՐԱՆՍԱ

Տրէֆուսի հարցին վերաբնու-
թեան համար կատարուած են նա-
խապտարասական աշխատու-
թիւններ:

ԳԵՐՄԱՆԻԱ

Չօրավար Վալտըրտէ, 1900ին
Զինաստանի միջազգային զօրաց
հրամանատարը մեռած է:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Կրկին սպազրութեամբ Բնաշխար
հիկ Թաւարանի Ա. հատորի Ա. զիրքը
բաղկացած 50 քառածու թերթերէ,
40: էջէ, զարգարուած յատուկ խը-
նամքով տպուած բազմաթիւ պատ-
կերնիով: Թէև խոտացած էինք
շարունակել Բ. հատորի սպազրութիւ-
նը և Ա. հատորը կրկին սպազրել յե-
տոյ, սակայն բազմաթիւ նոր բժա-
նորդներու գիտնականներու մեղ
ստիպեցին փութացնել Ա. հատորի կրկին
սպազրութիւնը: Կը փութանք յայտ-
նելու միայնգամայն, թէ Բ. հատորի
Ա. գրքի սպազրութիւնն եւս սկսած
ենք շարունակել և պիտի շանանք Լ-
ամիսէն աւարտել ու զրկել բաժա-
նորդներու:

Տ'Այտարիւն Միլիթարիսկ Տպարանի

Բաժանորդագրութիւնը կը շարու-
նակուի: Իւրաքանչիւր հատորի բա-
նեգինն է 15 ֆրանկ 6 րուպի 3 սո-
լար:

Հասցէ՝ Էմբրիլեոսի Արմենիէն
Սդ. Լագար Վէնիս (Իրալի)

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна